ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով **փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների** ձեռքբերման նպատակով ձևավորված «**ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ԱՊՊԱ-23/1**» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5 05 դեկտեմբեր 2023թ.
ժամը՝ 17:45

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Սեփոյան, Կ. Մարտիրոսյան, Ս. Գարանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Գնման հայտով սահմանված գնվելիք ծառայության գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)*
1	*Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ*	*առավելագույնը 4 000 000*

2.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«**ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ԱՊՊԱ-23/1**» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/հ	*Մասնակիցների անվանումները*	*Հասցեներ*
1	**«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ**	ՀՎՀՀ՝ 02551341, ՀՀ, ք. Երևան, Արամի 3,5, հեռ. 060 54 -00-00, info.@silinsurance.am
1	**«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ**	ՀՎՀՀ՝ 00031904, ՀՀ, ք. Երևան, Ավետ Ավետիսյան 116/1 և 116/5, հեռ. 060-50-00-60, nairi@imnairi.am

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

3.1. Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

4.1 Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը արձանագրեց, որ ներկայացված հայտերում /հայտում առկա փաստաթղթերում/ կան անհամապատասխանություններ, մասնավորապես.

4.1.1 **«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ**-ի կողմից ներկայացված հայտում

- Ներկայացված Հավելված 1-ում ակտիվ չէ իրական շահառուների վերաբերյալ կայքէջի հղումը և բացակայում է **«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ**-ի իրական շահառուների վերաբերյալ կայքէջի հղումը:

4.1.2 **«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում

- Ներկայացված Հավելված 1-ում ակտիվ չէ իրական շահառուների վերաբերյալ կայքէջի հղումը և բացակայում է **«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ**-ի իրական շահառուների վերաբերյալ կայքէջի հղումը:
- Լիազորագրին կցված չէ լիազորված անձի անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև՝ «**ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ԱՊՊԱ-23/1**» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.9 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 06.12.2023թ.-ին ծանուցել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և գնման հայտով սահմանած գինը

Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ					
հ/հ	Մասնակցի անվանումը	Գնման հայտով սահմանած գին	Գին /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Գին /ներառյալ ԱԱՀ/
1	«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	առավելագույնը 4 000 000	3 502 000	-	3 502 000
2	«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ		4 524 000	-	4 524 000

6. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների, պատասխանների և հրավերում կատարված փոփոխությունների մասին

Հայտերի վերաբերյալ հարցումներ, պատասխաններ չեն եղել: Հրավերի փոփոխություն չի կատարվել:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 07.12.2023թ. ժամը 11:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. 07.12.2023թ. ժամը 11:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 07.12.2023թ. ժամը 11:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ մասնակիցների կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են շտկման ենթակա փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

8.1 **«ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ԱՊՊԱ-23/1»** ծածկագրով գնանշման հարցման 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից **«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ**-ին:

8.2 Հաստատել **ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ԱՊՊԱ-23/1** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը համաձայն հավելվածի:

8.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

8.4 **«ՀՀ ՔԿ ԳՀԾՁԲ-ԱՊՊԱ-23/1»** ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցին առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովում տուժանքի ձևով՝ հրավերով սահմանված կարգին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) — Կարեն Հովհաննիսյան

անդամներ՝

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Գևորգ Սեփոյան

2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Կատյա Մարտիրոսյան

3.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Աննա Թումանյան

4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Սիլվա Գարանյան

5.Գնման Պատասխանատու/ հանձնաժողովի քարտուղար (ԳՊ/ՄՀմ) — Նաիրա Բաբայան